

## Վահե Հովսեփյան

### ԽՈԶԱԼՈՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ

**Բանալի բառեր** – Խոջալու, հումանիտար միջանցք, ազատագրական գործողություն, ադրբեջանական քարոզություն:

Խորհրդային Միության գոյության ողջ ընթացքում իայ ժողովուրդը մոռացության չեր տվել Արցախյան հիմնահարցը: Անհրաժեշտ էր վերականգնել պատմական արդարությունը և Արցախը միացնել մայր Հայաստանին: Այդ հիմնահարցի ավելի ընդգրկուն արծարծունը սկսվեց հատկապես այն ժամանակ, երբ որպես ԽՍԿԿ առաջին քարտուղար ընտրվեց Մ. Գորբաչովը: Նրա քաղաքականությունը հնարավորություն տվեց, որ Արցախյան խնդիրը քննարկման և համրահավաքների առարկա դարձնա: Հայ ժողովուրդը պահանջուն էր Արցախը վերադարձնել մայր հայրենիքին: Սակայն թե՝ Բաքուն և թե՝ Մոսկվան չեին պատրաստվում հարցին արդարացի լուծուն տալ:

ԽՍՀՄ գոյության վերջին շրջանում Արցախի հայության նկատմամբ ադրբեջանական իշխանությունները սկսեցին լայնամասշտար ագրեսիա, որն ավելի արյունալի դարձավ ԽՍՀՄ փլուզումից հետո: Անհրաժեշտ էր անհապաղ ապահովել Արցախի բնակչության անվտանգությունը և կազմակերպել ինքնապաշտպանական ուժեր, որոնք էլ պետք է ճնշեին ադրբեջանական կրակակետերը: Այդ կրակակետերից մեկն էլ քաղաք հոչքաված<sup>1</sup> Խոջալու բնակավայրն էր, որը հատուկ մշակված քաղաքականության արդյունքում բնակեցվել էր ադրբեջանցիներով և մասամբ մեսխեթցի թուրքերով<sup>2</sup>:

Խոջալուն անհրաժեշտ էր օր առաջ ազատագրել, ինչի շնորհիվ Խոջալուից Ստեփանակերտի վրա գնդակոծությունները կդադարեցվեին<sup>3</sup>, Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհին սպառնացող վտանգը կչեզրացվեր, քաղաքի մոտ գտնվող Արցախի միակ օդանավակայանը կրիներ հայկական կողմից վերահսկողության տակ (Հայաստանի հետ օդային և ճանապարհային կապի խոցելիությունը ծանր իրավիճակի մեջ էր դրեւ Ստեփանակերտի բնակչությանը): Բնակավայրի ազատագրումը ապահովելու էր նաև Շուշիի ազատագրման գործողության հաջող կազմակերպումը:

Գործողության ժամանակ Խոջալուում գտնվում էր 1000-2500 մարդ, ներառյալ՝ զինված ստորաբաժանումների անդամները<sup>4</sup>, չնայած նրան, որ ադրբեջանական կողմին հնարավորություն էր տրվել խաղաղ բնակչությանը դուրս բերել բնակավայրից: Նախքան գործողություններ սկսելը ադրբեջանական կողմին հայտնի էր բնակչության դուրսբերման հնարավոր ուղին, որի մասին մենք տեղեկանում ենք Խոջալուի ազատագրումից հետո քաղաքում հայտնաբերված փաստաթթերից մեկի բովանդակությունից: Փաստաթուղթը վերցված է Արևադի Տեր-Թադևոսյանի անձնական արխիվից<sup>5</sup>: Բնակավայրը պաշտպանում էին 160 աշխարհազորայիններ և Ադրբեջանի ՆԳՆ հատուկ նշանակության ոստիկանական ջոկատները և բանակի զինվորները: Գործողությունը սկսելու բոլոր հնարավոր ուղղություններում ադրբեջանցիները տեղադրել էին գնդացիրներ: Քաջի այդ ամենավտանգավոր տեղերում կառուցվել էին բետոնե թաքստոցներ, իսկ ճանապարհները փակված էին բետոնե սալիկներով: Քաղաքում կային գրահամեքենաներ (БТР) և 2 «Գրադ» համակարգեր: Ավելացնենք նաև այս, որ Խոջալու տանող բոլոր ուղղությունները հարթավայրային էին և ազատ կարող էին գնդակոծվել<sup>6</sup>:

Նախքան գործողություն սկսելը հայկական կողմը փորձել է բանակցություններ վարել ադրբեջանական կողմի հետ՝ զոհվածներին փոխանակելու, ինչպես նաև Խոջա-

<sup>1</sup> Արանեսյան Վ., Խոջալու. հանցագործության անառողման: Ստեփանակերտ, 2013, էջ 8:

<sup>2</sup> Ջիրօխօս Մ., Մեջ և օգոս Կարաբախ. Մ., 2012, ս. 83-84.

<sup>3</sup> «Ազգ» երոյա թերթ, № 10, 12 փետրվար, 1992, էջ 2:

<sup>4</sup> Դեմօյն Ղ., Մելիկ-Շահնազարյան Լ., Խօջալինսկու գործողությունը: Ազգային պատմագիր: Երևան, 2003, ս. 16.

<sup>5</sup> Տե՛ս հաշվելված 1:

<sup>6</sup> Մելիկ-Շահնազարյան Լ., Օ войне и победе, том I, Е., 2015, с. 280.

լուի խաղաղ բնակչությանը բնակավայրից դուրս բերելու համար: Սակայն ադրբե-ջանական կողմը հրաժարվել էր բանակցել: Այս փաստի մասին մենք տեղեկանում ենք Ա. Տեր-Թադևոսյանի անձնական արխիվից<sup>1</sup>: Գրոհից մի քանի օր առաջ հայկական կողմի ներկայացուցիչները, օգտագործելով ռադիոկապը, մի քանի անգամ տեղեկացնում են Խոջալուի ադրբեջանական ղեկավարությանը գործողության նախապատրաստման մասին: Այն, որ այդ ինֆորմացիան փոխանցվել և հասանելի է եղել ադրբեջանական կողմի համար, վկայում են ադրբեջանական թերթերը<sup>2</sup>: Միջանցքի մասին գիտեր նաև Խոջալուի քաղաքաբետ է. Մամեդովը<sup>3</sup>:

Խոջալուի ազատագրման գործողությունը մշակվել և իրագործվել է Ա. Տեր-Թադևոսյանի հրամանատարությամբ<sup>4</sup>: Գրոհը պետք է իրականացվեր չորս ուղղություններով՝ 1. Մեհտիշենի (հրամանատար՝ մայոր Արոյան), 2. Նորագյուղի (հրամանատար՝ Վ. Չիտյան), 3. Քյաթուկի (հրամանատար՝ Ս. Օհանյան), 4. հատուկ նշանակության (հրամանատար՝ Ս. Հակոբյան)<sup>5</sup>:

Հրամանատարների և մասնակից ջոկատների թվակազմի մասին կարող ենք տեսնել նաև «Խոջալուի ազատագրման ծրագրում», որը պահպանվել է Ա. Տեր-Թադևոսյանի անձնական արխիվում<sup>6</sup>:

Գործողությունը սկսվեց 1992 թ. փետրվարի 26-ին ժամը 22<sup>00</sup>-ին: ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի ստորաբաժանումները միջանցք էին թողել գյուղի բնակչության համար՝ գործողությունների գոտուց անվտանգ հեռանալու նպատակով<sup>7</sup>:

Ադրբեջանական կողմը ոչինչ չէր ծերարկել խաղաղ բնակչությանը դուրս բերելու համար: Սա կարող է ունենալ միայն մեկ բացատրություն, այն է՝ ադրբեջանական կողմը ցանկացել է խաղաղ բնակչությանը թողնել տեղում՝ նրան որպես կենդանի վահան օգտագործելու համար:

Գործողությունը ավարտվեց փետրվարի 26-ին՝ առավոտյան ժամը 4-ին: Արյունքում հայկական կողմից զոհվեց 6 և վիրավորվեց 12 հոգի: Հակառակորդը տվեց 11 զոհ և 37 գերի: Խոջալուում մնացած շուրջ 700 խաղաղ բնակչիներ հանձնվեցին ադրբեջանական կողմին 1992 թ. մարտի 28-ին<sup>8</sup>:

Խոջալու բնակչությունը գտնվողների մեջ մասը բաց թողնված «միջանցքով» հեռացան, սակայն Աղդամի մատուցներում սեփական զինյալները նրանց կրակով դիմավորեցին և գնդակահարեցին<sup>9</sup>:

Փախստականների սպանության վերաբերյալ իր տեղեկություններն է հաղորդում արցախյան պատերազմի առաջին հետախուզադիվերսիոն ջոկատի հրամանատար Վ. Վարդանովը, որը այդ ժամանակ հետախուզական աշխատանքներ էր իրականացնում Նախիջևանիկ գյուղի շրջանում, և կարելի է ասել, որ ականատես է եղել Խոջալուի խաղաղ բնակչության ոչնչացմանը: Վ. Վարդանովը նշում է, որ ադրբեջանական զինվորները, հնարավոր է, որ սխալմամբ երկու դիրքերից խաչաձև կրակ են բացել դեպի Նախիջևանիկ շարժվող խոջալեցիների վրա՝ կարծելով, որ վերջիններս հայեր են<sup>10</sup>:

<sup>1</sup> Մամրաման տե՛ս հավելված 2:

<sup>2</sup> «Доклад правозащитного центра «Мемориал» о массовых нарушениях прав человека, связанных с занятием населенного пункта Ходжалы в ночь с 25 на 26 февраля 1992 г. вооруженными формированиями».

<http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Hojaly/Chapter1.htm> դիտվել է 27.03.2017:

<sup>3</sup> Դեմօյան Գ., Մելիկ-Շահնազարյան Լ., Խոջալինսкое дело: особая папка: Е., 2003, с. 17.

<sup>4</sup> Տեր-Տածոսյան Ա., Անալիզ боевых действий в Аրцахе (июль 1991-июль 1992 гг.), «Ուզմավարության և անվտանգության հարցեր», Ե., 2007, էջ 569:

<sup>5</sup> Վարդումյան Հ. Շուշիի ազատագրումը, Ե., 2007, էջ 23-24:

<sup>6</sup> Տե՛ս հավելված 3:

<sup>7</sup> Տեր-Տածոսյան Ա., Անալիզ боевых действий в Арцахе (июль 1991-июль 1992 гг.), էջ 569:

<sup>8</sup> «Доклад правозащитного центра «Мемориал» о массовых нарушениях прав человека, связанных с занятием населенного пункта Ходжалы в ночь с 25 на 26 февраля 1992 г. вооруженными формированиями».

<http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Hojaly/Chapter1.htm> դիտվել է 27.03.2017:

<sup>9</sup> Վարդումյան Հ. Շուշիի ազատագրումը, Ե., 2007, էջ 26:

<sup>10</sup> Կամավորական շարժումը թուրք-պարաբայան պատերազմի ժամանակ, «Հայրենատիրություն» ձմեռ-զարու 2014, դաս ԺԲ - 26.02.2014թ. բանախոս՝ Կովկա Կարտանով, Տե՛ս <http://www.modusvivendicenter.org/hy/node/446> դիտվել է 03.03.2017

Փաստերը վկայում են, որ հումանիտար միջանցքով դուրս եկած բնակչությունը ոչնչացվել է Աղդամի մոտակայքում, որն էլ դուրս էր հայկական ինքնապաշտպանական ուժերի վերահսկողությունից:

Ահա այս իրադարձություններն են, որ ադրբեջանցիները օգտագործում են հայերին ադրբեջանցիների նկատմամբ այսպես կոչված «ջարդ» կամ այսպես կոչված «ցեղասպանություն» կազմակերպելու մեջ մեղադրելու համար<sup>1</sup>:

Դիակների ուսումնասիրությունից և ադրբեջանական կողմի հաղորդած տվյալներից պարզվել է, որ նրանց սպանել են հիմնականում դիմահար կրակով: Այս մասին նշում է նաև Ա. Տեր-Թադևոսյանը. «Նրանք սպանվել էին դիմահար կրակով, այլ ոչ թե հետևից են կրակել»<sup>2</sup>, այսինքն՝ նրանց սպանողները եղել են Աղդամում գտնվող ադրբեջանական զինվորները:

Նախիջևանիկ գյուղի մոտակայքում տեղի ունեցած սպանությունների վերաբերյալ շատ փաստեր պարզ են դառնում այն բանից հետո, եթե մենք ծանոթանում ենք Ս. Աբասովի հուշերին, որը նահանջողների թվում է եղել: Վերջինիս խոսքերով իրենց ադրբեջանական կողմը ռադիոկապով հաղորդել էր, որ Նախիջևանիկ գյուղը գտնվում էր իր ձեռքում<sup>3</sup>: Այսինքն՝ Խոջալուում գտնվողները, ելնելով այդ տեղեկությունից, ենթադրել էին, որ Նախիջևանիկն անվտանգ է և հումանիտար միջանցքով դուրս գալով՝ շարժվել այդ ուղղությամբ, ինչից հետո Նախիջևանիկ տանող ձանապարհին ադրբեջանական զինված ջոկատները վերջիններիս ենթարկել են գնդակոծնան:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ հայկական կողմը բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել էր նվազագույնի հասցնելու համար խաղաղ բնակչության շրջանում զոհերի հավանականությունը. Խոջալեցինները սպանությունները տեղի են ունեցել ադրբեջանական կողմից վերահսկվող տարածքում:

Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովն այս դեպքերի վերաբերյալ իր հարցագրույցներից մեկում հետևյալ միտքն է արտահայտել. «Ինչպես վկայում են այն ադրբեջանցիները, որոնք փրկվել են, այդ ամենը կազմակերպվել է, որպեսզի արիթլինի իմ հրաժարականի համար: Ինչ-որ ուժ է գործել նախագահին վարկաբեկելու նպատակով: Կարելի է ենթադրել, թե ինչ-որ մեկը շահագրգորված է եղել այն բանում, որ փաստաթղթերը հետո ցուցադրվեն Գերագույն խորհրդի նստաշրջանում, և այդ ամենն ուղղվի իմ անձի դեմ [ինարավոր է, նկատի ունի ազգային ճակատը-Վ. Հ.]»<sup>4</sup>: Այդպիսով՝ ադրբեջանական ազգային ճակատի առաջնորդները հիմք էին ստեղծում, որպեսզի Ա. Մութալիբովին մեղադրեն այն բանում, որ նա վճռականություն չի ցուցաբերում արցախյան հարցը հօգուտ Ադրբեջանի կարգավորելու համար: Նրան էին մեղադրում խոջալեցինների հետ կատարվածի համար: Այդ ամենը ապացուցվում է դեպքերի հետագա զարգացման ընթացքում:

Այսպես՝ դեպքի վայրում՝ Աղդամի մոտակայքում, փետրվարի 29-ին և մարտի 2-ին տեղի են ունեցել նկարահանումներ: 1992 թ. մարտի 2-ին, եթե իրականացվեցին երկրորդ նկարահանումները, լրագրողները նկատեցին, որ դիակների դիրքը գետնի վրա փոխվել էր, իսկ վնասվածության աստիճանն ակնհայտորեն աճել էր: Այդ ամենը նկատել էր նաև լրագրող Զ. Մուստաֆակալը<sup>5</sup>, որի մասին գեկուցել էր Ա. Մութալիբովին, որը նրան խորհուրդ էր տվել լրել, հակառակ դեպքում նրան կարող էին սպանել<sup>6</sup>:

Վերը նշված նկարահանումների կադրերը հետագայում ցուցադրվեցին նախ Ադրբեջանի Գերագույն խորհրդի նստաշրջանում, ապա նաև հեռուստատեսությամբ, որից հետո բողոքի ալիք բարձրացավ Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովի դեմ: Մարտի 6-ին Մութալիբովը հրաժարական տվեց<sup>7</sup>:

<sup>1</sup> Այս մասին Տե՛ս՝ Խոջալա. Հրոնика բանագիր. Բակու, 1993.

<sup>2</sup> Արկադի Տեր-Թադևոսյանի հետ հեղինակի հարցագրույցից, որը տեղի է ունեցել 07.03.2017:

<sup>3</sup> Մելիկ-Շահնազարյան Լ., նշվ. աշխ., էջ 288:

<sup>4</sup> Ղանիեյան Կ., Արցախը չսանձած նժույզ, Ե., 2001, էջ 161-162:

<sup>5</sup> Ամիսներ անց Մուստաֆակալը գրիվում է լրագրողական պարտը կատարելիս, շատ հնարավոր է, որ նրան սպանել են Ադրբեջանի ազգային ճակատի ներկայացուցիչները՝ լրեցնելու համար:

<sup>6</sup> Մելիկ-Շահնազարյան Լ., Օ войնե և պոbede, տոմ I, ս. 287.

<sup>7</sup> Մելիկ-Շահնազարյան Լ., Դեմօյն Գ., Խոջալինսկու ծեծությունը: առաջնային պարագաներ, Ե., 2002,

1992 թ. փետրվարի 26-ին Արցախի հնքնապաշտպանական ուժերի կողմից ազատագրական գործողության իրականացումից հետո պաշտոնական Բաքուն այդ դեպքի վերաբերյալ տարբեր տեղեկություններ է տարածում՝ հայերի կողմից իրականացված խոջալեցիների այսպես կոչված «Զարդերի», հումանիտար միջանցքի չորամադրման և այլ խնդիրների վերաբերյալ, որոնք նպատակ ունեն վարկաբեկել հայ հնքնապաշտպանական ուժերին: Այդ քաղաքականությունը չի իրականացվում պատահականորեն, քանի որ դրա հետևում թաքնված են Ադրբեջանի շահերը:

Այսպես՝ «Փետրվարի 26-ին թուրքական հեռուստատեսությունը, հենվելով Ադրբեջանի ներքին գործերի նախարարի տվյալների վրա, հաղորդեց, թե Խոջալուուն սպանվել են ավելի քան 100 ադրբեջանցիներ: Հետագա հաղորդումներում սպանվածների թիվը բարձրացավ ընդհուպ մինչև 1230-ի: Փետրվարի 28-ին Թուրքիայի արտգործնախարար <. Չերինի Բաքու կատարած այցի կապակցությամբ թուրքական հեռուստատեսությանը տված հարցազրույցի ընթացքում Ա. Մութավիլբովի հայտարությունից հետո վերոհիշյալ թիվը ենթարկվեց մասնակի կրծատման և հաստատվեց «ավելի քան 1000 կին, տղամարդ և երեխաներ» վերջնական տեսքով»<sup>1</sup>: Այդեն հաջորդող տարիներին ադրբեջանական արտաքին քաղաքական մերենան մեծ աղմուկ բարձրացրեց միջազգային ասպարեզում՝ հայկական կողմին մեղադրելով այսպես կոչված «ցեղասպանության» մեջ<sup>2</sup>: Այժմ ադրբեջանական կողմը նշում է, որ սպանվածների թիվը եղել է 613<sup>3</sup>:

Ադրբեջանը պաշտոնապես «ցեղասպանությունը» սկսեց նշել 1998 թ. <. Ալիևի նախագահության շրջանում: Կարելի է ենթադրել, որ դա արվում էր Երկակի նպատակով: Նախ՝ այդ քաղաքականությամբ Ադրբեջանը փորձում էր շեղել իր բնակչության ուշադրությունը ներքին խնդիրներից և հետո՝ այդ կերպ միջազգային հանրութան աչքերում հայկական կողմին ներկայացնում է որպես «Զարդարարի»: Այժմ այդ իրադարձությունների վերաբերյալ ստեղծված են բազմաթիվ կայքեր, որոնք ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն և այլ լեզուներով ներկայացնում են ադրբեջանական պաշտոնական տեսակետները<sup>4</sup>:

Այսպիսով՝ հայկական ուժերի հնքնապաշտպանական գործողությունն ադրբեջանական կողմն արդեն երրորդ տասնամյակն է՝ փորձում է ծառայեցնել իր շահերին՝ չխորշելով հայկական կողմին մեղադրել այն հարցում, որի միակ պատասխանատուն հենց ադրբեջանական կողմն է:

**Ваге Овсепян. Военная операция в Ходжалу,-** В статье рассматриваются подробности военно-освободительной операции Ходжалу, предоставление гуманитарного коридора, цель которого было спасение жизни азербайджанских мирных жителей.

Подчеркивается тот факт, что именно азербайджанские войска организовали инцидент, который принимают в качестве геноцида. В государственной пропаганде Азрбайджане важное место дается тому, что действия армянских сил самообороны представляются как «попытка уничтожения людей» или «акт геноцида».

**Ключевые слова:** Ходжалу, гуманитарный коридор, освободительная операция, азербайджанская пропаганда.

**Vahé Hovsepyan. Military operation in Khojalu,-** Some details about the liberation of Khojalu by the Armenian self-defence forces and the provision of the humanitarian corridor by them are described in the article.

[http://www.armenianhouse.org/mshakhnazaryan/docs-ru/khojaly\\_f/khojaly.html](http://www.armenianhouse.org/mshakhnazaryan/docs-ru/khojaly_f/khojaly.html), դիտվել է 28.03.2017

<sup>1</sup>Թուրք ազերի քարոզչությունը, «Ազգ» երօյա թերթ, № 16, 4 մարտ, 1992, էջ 5:

<sup>2</sup>ՀակոբյանՏ., ԼՂՀ հոչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.): Ե. 2011, էջ 53:

<sup>3</sup>Ходжалинский геноцид, Фонд Гейдара Алиева, Баку 2015, с. 22.

<sup>4</sup> [http://www.azerbaijan.az/portal/Karabakh/Genocide/genocide\\_r.html](http://www.azerbaijan.az/portal/Karabakh/Genocide/genocide_r.html), <http://1905.az/ru/ходжалинский-геноцид-в-объективе-ино/>, դիտվել է 28.03.2017

The fact, that Azerbaijani side had organized that incident and tries to represent the operation as an act of genocide or massacre is highlighted in the article. In the Azerbaijani propaganda an important role is given to the efforts to discredit Armenian self-defence forces.

**Key words:** Khojalu, humanitarian corridor, liberating operation, Azerbaijan's propaganda.

## Հայելու 1

### Сведения о возможных путях массового вывода населения г.Ходжалы

1. Из г.Ходжалы можно пройти пешком по газопроводу до армянского села Кятук. Ниже указанного села и с.Нахчываник Аскеранского района имеется возможность дойти до азербайджанского села Шелли агдамского района. (Расстояние около 20 км.)
2. Из г.Ходжалы через поле т.н. Сергали с правой стороны свиноводческой фермы Сунджинка, с левой стороны Нового Норагюха, слева от кормзавода, переходя речку Илис вблизи высокого орехового дерева можно дойти до имеющегося там сада (тутовые деревья). После разведки ниже дачного хозяйства и зимнего пастбища слева от армянского села Сардарашен и Фаррух можно дойти до села Алиагалы (Хачын) Агдамского района. 16 февраля с.г. по указанной тропинке в Агдамской район прибыли жители г.Ходжалы Оруджев Гасан и Мусаев Имамверди, которые перегнали свой скот (8 коров-2 лошади). На наше предложение житель г.Ходжалы Мусаев Мисир Иса оглы согласился быть проводником, в настоящее время проживающий в с. Сейдли Агдамского района. (Расстояние примерно 40 км.) По обоим дорогам можно пройти только пешком, при поддержке вооруженных групп и БТР со стороны Агдамского района. Имеется возможность по этой дороге перебраться в г.Ходжалы танками, однако необходимо при этом отработать варианты по отвлечении внимания противника из указанной зоны.

Дежурный УМНБ Азерб. Республики  
по Карабаху С. Б. Бахтияров  
Копия сведений 17.02.92 г. передана руководителю штаба МО т.  
Гаджиеву Ф. был  
представлен Мусаев М., который согласился быть проводником.

## ՀայելՎած2

### ОБОВЬЕЧНАЯ СРОДКА

на 23 февраля 1992 г.

В 4.00 22 февраля 1992г. армянские вооруженные отряды про-  
извели интенсивный обстрел села Ехари Бейсаллы из района горо-  
да Чартуц, а затем перешли в наступление и захватили село, а  
затем двинулись на юг и захватили село Дилагарда.

По предварительным данным убитых 15 человек и около 20  
раненых в плен.

После захвата указанных сел вооруженные отряды двинулись  
в город Сисули. Жители города в паническом состоянии покида-  
ют город.

При наступлении армянские боевики использовали 1 танк,  
БМП, 3 БРДМ, экипажи которых предположительно укомплекто-  
ваны военнослужащими русской национальности.

Город Ходжалы подвергается интенсивному обстрелу со сторо-  
ны города Ханкendi и Аскеранского района со всех видов оружия.  
Захват военнопленных и раненых, разрушено большое количество домов.  
В направлении Ханкendi на Ходжалы выдвигаются дополнительные  
的力量 около 20 танков и БТР.

Армянские боевики, на 4 БМП со стороны Горисского района  
захватили на 3 - 4 км. на территорию Кубатлинского района  
против села Алигулиушагы. В ходе боев убито и ранено 2 че-  
ловека. По проверенным данным в нападении участвуют военнослу-  
жебные русской и узбекской национальности.

Армянская сторона предложила провести встречу на границе  
Аскеранского района с целью обмена заложников и трупов. По  
проверенным данным у них имеются 46 пленных из села Карадаглы  
и 120 трупов из села Гашалты.

21.02.92г. в 14.00 была проведена встреча с представите-  
лями Кафанского, Горисского и Сисианского районов. С нашей  
стороны на встрече принимали участие прокурор, начальник ми-  
лиции, начальник ГОМНК и 1-й заместитель главы исполнительной  
 власти района. Такой же состав был со стороны Лачинского рай-  
она. Достигнута договоренность, приграничные села не обстре-  
лять.

В ночь с 22 на 23 февраля 1992г. группа людей 15-20 че-  
ловек, в военной форме, одежды, русской национальности на

одной автомашины совершила нападения на здания штаба Кубинского батальона. В результате полностью разрушен был и ранен два человека из состава батальона.

**ПРИЧИНА:** 1. Армянские вооруженные отряды превоюзительно совместно с китайским составом 366 ЧСИ с использованием техники и вооружения волна продолжает захват азербайджанских сел, уничтожения и наезда азербайджанского населения, но только в Нагорной части Карабаха, но и на приграничных районах с Карабахом.

2. С целью продления насилия в захваченных, и для выигрыша времени, под разным предлогом армянская сторона идет на переговоры, а сами готовят обороны против наших населенных пунктов и наступают на наши деревни.

3. Для выигрыша времени на них представителями нахлессобрасло при предложении со стороны армии о переговорах, затягивая время переговоров с целью изучения настроений армянской стороны и только после определения источникаummerных причин пойти на переговоры.

Министерство обороны Азербайджанской Республики  
Генерал-лейтенант  
ШУСАЕВ В.Х.  
Майор  
М.М. Меликов

Հավելված

Направление	Подраздел.	К-б 116	Расчет средней				Дополнительная			Резерв приданый
			РПГ-7	АГС 18	РПК РАР	АКМ	АКЛ	СРР		
Механики	САСЧН (Рос)	21	1		1	10	10			Ком. 6р - 15. Ком. 6р - 10. Сп. 6р - 2200 Маг - 5000 Соврем - 3200 АЛБ - 3200 (4000). Танк.
	СУРИК (Север)	14	1	1	1	6	7		1	
	Аева	20	1	1	1					
Бо-40	АКАП (Малая)	17		1	2				2	Бо-40 - 1400 Сам - 2200 Сп. 40 - 2200 Маг - 4000 Соврем - 3200 АЛБ - 3200 (4000). Танк.
	ВИТАЛИК (Рос)	20	1	1	2				1	
	Брота	22	2	1	2					
	АФО	12			2				-	
Всего №1		126	6	2	10					
Норматив	Зр (Тихий)	35	1	1	3					Бо-40 - 1400 Сам - 2200 Сп. 40 - 2200 Маг - 4000 АЛБ - 3200
	9р (Юрга)	30	1		1					
	Арамо	22	1		2					
	ГАГО (Малый)	27	1		1					
Виллер	Эдик	26	1		2					
		10	1	1	1					
Всего №2		159	6	3	9					
Катэк	1р (Белор)	60	2	1	3					АГС - 10 Виаги - 10 Сп. 40 - 3200 Маг - 6000 Соврем - 4000 5р - 2000.
	2р (Каро)	30	3	1	3					
	5р	50	2		3					
	ЛАЙБОРТ (Алания) Болуджес	17 28	-		1					
Всего №3		195	6	3	10					
Спец. нормы АЭРОНОДРФ СНПС	Демка	20	1		2	4	4			Жен. 3р - 1000.
	Смбнт	10	1		1	3	3			
	Арам (БМП-2)	7	-		1					
	Арам (БМП-2)	27			5	11	11		4	
Итого		613	267	2	5	11	11		126	

1:10 000

487 км

Составлен на основе карты 214  
с учетом подразделений, брошенных на позиции в  
действии противника (до 10.000 м).

Составлен на основе карты 214  
с учетом подразделений, брошенных на позиции в  
действии противника (до 10.000 м).